ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» դեկտեմբերի 2011թ. **N ---- - Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին» N 169-Ն որոշմամբ հաստատված.
   1) Եկամուտների գումարն ավելացնել 106,403.9 հազար դրամով,
   2) ծախսերի գումարը ավելացնել 106,403.9 հազար դրամով:
2. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին» N 169-Ն որոշմամբ հաստատված NN1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN1-5 հավելվածների:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի (այսուհետ՝ ՎԶԵԲ) միջև 2010 թվականի մարտի 10-ին կնքված և 2010 թվականի օգոստոսի 10-ի Եվրոպական Ներդրումային բանկի (այսուհետ՝ ԵՆԲ) հետ կնքված վարկային համաձայնագրերի (այսուհետ՝ Համաձայնագրեր) շրջանակներում Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման ծրագրի իրականացման համար հատկացվել է 10 մլն. եվրո ընդհանուր գումարի վարկ: Համաձայնագրերի շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարարության և «Կարեն Դեմիրճյանի անվան մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 13.07.2010 թվականի և 03.05.2011 թվականի կնքված Ենթավարկային պայմանագրերով (այսուհետ՝ Ենթավարկային պայմանագրեր) նախատեսվել է վարկի տոկոսների մարում Ընկերության կողմից:

Հաշվի առնելով, Համաձայնագրերով ստանձնած պարտավորությունները, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ-գլխավոր գանձապետի 05.10.2011 թվականի հհ. 3/3.8-1/85455-11h և 3/3.8-1/73342h գրություններով ներկայացված վճարման ենթակա գումարների չափը կազմում է **202,674.0** եվրո, որը ըստ պայմանագրերի բաղկացած է.

- ՎԶԵԲ հետ Համաձայնագրի շրջանակներում ընկերության կողմից վճարման ենթակա գումարը կազմում է **110,952.0** եվրո, որից 90,832.0 եվրոն հաշվարկված տոկոսագումար, 16,796.0 եվրոն հաշվարկված պարտավճար, իսկ 3,324.0 եվրոն ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժ,
- ԵՆԲ հետ Համաձայնագրի շրջանակներում Ընկերության կողմից վճարման ենթակա գումարը կազմում է **91,722.0** եվրո, որից 4,374.0 եվրոն հաշվարկված տոկոսագումար, 12,348.0 եվրոն հաշվարկված պարտավճար, իսկ 75,000.0 եվրոն կանխավճար:

Նշված պարտավորությունները մարելու նպատակով նախապատրաստվել է ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որն էլ ներկայացվել է քննարկման շահագրգիռ գերատեսչություններին: Հաշվի առնելով խնդրի հրատապությունը, ինչպես նաև այն, որ անհրաժեշտ է մինչև տարվա վերջ խնդրի կարգավորման նպատակով ձեռնարկել համապատասխան միջոցներ, սույն որոշման նախագծով առաջարկվում է Երևան

քաղաքի 2011 թվականի բյուջեի եկամուտներում և ծախսերում կատարել փոփոխություններ՝ համապատասխանաբար ավելացնելով 106,403.9 հազար դրամ, որը հաշվարկված ՀՀ կենտրոնական բանկի 08.12.2011 թվականի կուրսից 10 դրամ ավել, հաշվի առնելով եվրոյի փոխարժեքի տատանումները, որից ելնելով վճարման ենթակա գումարները կճշտվեն փաստացի վճարումների կատարման ժամանակ։

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին» N 169-Ն որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 1

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 169-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 2

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 169-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի եկամուտներն ու ծախսերը համապատասխանաբար ավելանում են 106,403.9 հազար դրամով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված N 1
Երևան քաղաքի ավագանու
2011 թվականի _____-ի
N _____ – Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
1000	**ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ**		**106,403.9**	**106,403.9**	**-**
	այդ թվում[a]				
1300	**3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ**	**7400**	**106,403.9**	**106,403.9**	**-**
	այդ թվում՝				
1340	**3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից**	**7421**	**106,403.9**	**106,403.9**	**-**
	այդ թվում՝				
1342	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ		106,403.9	106,403.9	-

Հավելված N 2
Երևան քաղաքի ավագանու
2011 թվականի _____-ի
N _____ – Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	*այդ թվում (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)*	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**106,403.9**	**106,403.9**	**-**
2400	**04**	**0**	**0**	**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	**106,403.9**	**106,403.9**	**-**
				այդ թվում՝			
2450	**04**	**5**	**0**	***Տրանսպորտ***	**106,403.9**	**106,403.9**	**-**
				որից՝			
2455	04	5	5	Խողովակաշարային և այլ տրանսպորտ	106,403.9	106,403.9	-

Հավելված N 3
Երևան քաղաքի ավագանու
2011 թվականի _____-ի
N _____ – Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ N 3 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	*այդ թվում (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)*	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
4000	**ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ**		**106,403.9**	**106,403.9**	**-**
	այդ թվում՝				
4050	**Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ[a]**	x	**106,403.9**	**106,403.9**	**-**
	այդ թվում՝				
4400	**1.4 ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ**	x	**106,403.9**	**106,403.9**	**-**
	այդ թվում՝				
4410	***ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ***	x	106,403.9	106,403.9	-
	որից՝				
4411	-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	106,403.9	106,403.9	-

Հավելված N 4
Երևան քաղաքի ավագանու
2011 թվականի _____-ի
N _____ – Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ N 6 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը	*այդ թվում (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)*	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		**106,403.9**	**106,403.9**	**-**
2400	**04**	**0**	**0**	**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**		**106,403.9**	**106,403.9**	**-**
				այդ թվում՝				
2450	**04**	**5**	**0**	***Տրանսպորտ***		**106,403.9**	**106,403.9**	**-**
				որից՝				
2455	04	5	5	Խողովակաշարային և այլ տրանսպորտ		106,403.9	106,403.9	-
				այդ թվում՝				
				7. Վերակառուցման զարգացման եվրոպական բանկի և Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում Երևանի մետրոպոլիտենի կողմից կնքված ենթավարկային պայմանագրերով նախատեսված կանխավճարների, տոկոսագումարների, պարտավճարների և տույժերի վճարումների իրականացում (պատվիրակված լիազորություններ)		***106,403.9***	***106,403.9***	-
				-Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	106,403.9	106,403.9	-

Հավելված N 5
Երևան քաղաքի ավագանու
2011 թվականի _____-ի
N _____ – Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ N 7 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1
ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը	*այդ թվում (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)*	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		**106,403.9**	**106,403.9**	**-**
2400	**04**	**0**	**0**	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**106,403.9**	**106,403.9**	**-**
				այդ թվում՝				
2450	**04**	**5**	**0**	***Տրանսպորտ***		**106,403.9**	**106,403.9**	**-**
				որից՝				
2455	04	5	5	Խողովակաշարային և այլ տրանսպորտ		106,403.9	106,403.9	-
				այդ թվում՝				
				7. Վերակառուցման զարգացման եվրոպական բանկի և Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում Երևանի մետրոպոլիտենի կողմից կնքված ենթավարկային պայմանագրերով նախատեսված կանխավճարների, տոկոսագումարների, պարտավճարների և տույժերի վճարումների իրականացում (պատվիրակված լիազորություններ)		***106,403.9***	***106,403.9***	-
				-Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	106,403.9	106,403.9	-